



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Steve Frintner, President
Charlene Tabet, Vice President
Steve Ferguson, Clerk
Dr. Emily Weisberg
Dr. Armond Aghakhanian

Superintendent
Matt Hill, Ed.D.

11 August 2021

ԲԴՄԾ-ի հարգելի աշակերտներ, ընտանիքներ և աշխատակիցներ,

Մենք շատ ուրախ ենք, որ օգոստոսի 16-ին աշակերտները վերադառնալու են դպրոց: Մենք գիտակցում ենք նաև, որ Կորոնավիրուսի դեպքերի աճը մտահոգություն է առաջացնում ծնողների մոտ երեխաներին դպրոց ուղարկելուց առաջ: Մենք շարունակում ենք աշխատել Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի (LACDPH) հետ՝ մեր աշակերտներին և աշխատակիցներին անվտանգ պահելու տարբեր մեթոդների կիրառման համար:

Ձեզ ենք ուղարկում [հաճախակի տրվող հարցերի](#) լրացուցիչ մի քանի պատասխաններ: Բացի այդ, ցանկանում եմ տրամադրել հետևյալ թարմացումները.

Պատվաստանյութեր. Ամենաառաջինը մենք պետք է պատվաստում ստանանք: Խնդրում են ծանոթանալ այս հղումի բովանդակության հետ.
<http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/vaccine/>. Բացի դրանից, կրթական գրասենյակն աշխատում է օրենքներ սահմանել, որը կպահանջի բոլոր աշխատակիցներին պատվաստանյութ ստանալ Մևնդի և դեղորայքի գրասենյակի (FDA) կողմից հասանելի պատվաստանյութի հաստատումից 60 օրվա ընթացքում, բացառությամբ այն անհատների, ովքեր, ըստ օրենքի՝ առողջական կամ կրոնական պատճառներով չեն կարող պատվաստանյութ ստանալ: Միաժամանակ, պատվաստում չստացած բոլոր աշխատակիցները պետք է շաբաթը մեկ անգամ քննություն անցնեն:

Քննություն. Հաշվի առնելով COVID հիվանդության աճի դեպքերը, մենք ընդլայնում ենք քննության մեր ծրագիրը: Ախտանշան ունեցող անհատներից և պատվաստում չստացած աշխատակիցներից բացի, շաբաթը մեկ անգամ քննություն են անցնելու նաև պատվաստանյութ չստացած աշակերտները:

Առանձին նամակ կուղարկենք նշելով քննությանը վերաբերվող բոլոր մանրամասները, ինչպես նաև թույլտվության ձևաթղթերը: Աշակերտները չեն կարող քննություն անցնել մինչև թույլտվություն չստանանք:

Միաժամանակ, քաջալերում ենք ընտանիքներին դիմել առողջապահական իրենց ապահովագրական կազմակերպություններին COVID-ի անվճար քննություն ստանալու համար (բժշկի գրասենյակ, դեղատուն, կլինիկա կամ գավառային գրասենյակի <https://covid19.lacounty.gov/testing/>), որպեսզի կարողանանք հիմնային քննություն անցկացնել մինչև դասերի սկսվելը:

COVID-19-ի անվտանգության ծրագիրը համապատասխանում է Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի (LACDPH) դպրոցները վերաբացելու արձանագրությունների հետ. մենք շարունակելու ենք, շաբաթը մեկ անգամ, հանդիպել Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական գրասենյակի հետ և իրականացնել գավառի արձանագրությունները, ինչպես նշված են շրջանի COVID-19-ի անվտանգության ծրագրում:

Հոգատարությամբ,
Մաթ



Դոկտոր Մաթ Շիլլ
Գերատեսուչ